THE CHICAGO COUNCIL ON GLOBAL AFFAIRS WORLDPUBLICOPINION.ORG Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

Միջազգային հանրությունը մեծապես կողմնակից է առեւտրային համաձայնագրերում աշխատանքային եւ շրջակա միջավայրի պահպանության չափանիշների ներառմանը

Բազմաթիվ զարգացող երկրներում եւ ԱՄՆ-ում գերակշռող մեծամասնությունը կողմ է այդ նվազագույն չափանիշների պահպանմանը

Բազմազգ հարցախույզի արդյունքները բացահայտել են, որ աշխարհի զարգացող երկրներում ազգաբնակչության գերակշիռ մեծամասնությունը կողմնակից է, որպեսզի առեւտրային համաձայնագրեր ստորագրող երկրներից պահանջվի աշխատանքային եւ բնապահպանական նվազագույն չափանիշների ապահովում: Յուրաքանչյուր 10 ամերիկացուց 9-ը նույնպես կողմ է նման պաշտպանվածությանը:

Սակայն ավելի քիչ զարգացած երկրների ղեկավարներն ընդհանրապես դեմ են եղել վերոնշյալին՝ այդ թվում առեւտրային գործարքներում աշխատանքային պայմանների եւ բնապահպանական նորմերի պաշտպանության նվազագույն չափանիշների լիազորման եղանակին՝ պատճառաբանելով, որ նման կանոնները «պրոտեկցիոնիստական» են եւ կվտանգեն Եվրոպայի ու ԱՄՆ-ի նման կարեւոր շուկաներում իրենց մրցակցելու կարողությունը:



Այդուհանդերձ, Ասիայի 4 զարգացող երկրներում՝ Չինաստանում, Հնդկաստանում, Թաիլանդում, Ֆիլիպիններում եւ միջին եկամուտ ունեցող լատինաամերիկյան երկու երկրներում՝ Արգենտինայում ու Մեքսիկայում մեծամասնությունն այն կարծիքին է, որ առեւտրային համաձայնագրերը պետք է կառավարություններից պահանջեն աշխատանքային պայմանների ու շրջակա միջավայրի պահպանության «նվազագույն չափանիշների» ապահովում:

Արեւելյան Եվրոպայի 3 երկրներում՝ Լեհաստանում, Հայաստանում եւ Ուկրաինայում հարցվածների զգալի մասը, ինչպեսեւ Իսրայելում գերակռող մեծամասնությունը նույնպես կողմ են դրան:

«Երբ զարգացող երկրների ղեկավարները դեմ են արտահայտվում առեւտրային համաձայնագրերում աշխատանքային կամ բնապահպանական չափանիշների ընդգրկմանը, հաճախ ենթադրվում է, որ նրանք ներկայացնում են իրենց ժողովրդի ցանկությունը: Սակայն երեւում է, որ այդ ժողովուրդները ցանկանում են տեսնել միջազգային հանրության ճնշումն իրենց կառավարությունների վրա, որպեսզի վերջիններս բարելավեն սեփական չափանիշները»,- նշում է «Համաշխարհային հասարակական կարծիք» հանդեսի խմբագիր Սթիվեն Քալը:

Այս բացահայտումները *Համաշխարհային հարցերով Չիկագոյի խորհուրդ* եւ *Համաշխարհային հասարակական կարծիք* կազմակերպությունների կողմից ու աշխարհի՝ հարցումներ անցկացնող տարբեր կազմակերպությունների հետ համագործակցաբար անցկացված բազմազգ ուսումնասիրության մի մասն են կազմում:

Համամոլորակային ու հեղինակավոր այս հարցումներում Հայաստանը ներկայացրել է *Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի* հանրային կարծիքի ուսումնասիրության ազգային ծառայությունը: Առավել ընդգրկուն հարցախույզը ներառել է 17 երկրներ՝ Չինաստանը, Հնդկաստանը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ինդոնեզիան, Ռուսաստանը, Թաիլանդը, Ուկրաինան, Լեհաստանը, Իրանը, Մեքսիկան, Հարավային Կորեան, Ֆիլիպինները, Ավստրալիան, Արգենտինան, Պերուն, Իսրայելը, Հայաստանը եւ Պաղեստինյան տարածքները:

Սույն զեկույցը երկրորդն է միջազգային առանցքային հարցերի հանդեպ համաշխարհային վերաբերմունքը վերլուծող ուսումնասիրության վրա կառուցված ամփոփագրերի շարքից: Ոչ բոլոր հարցերն են տրվել բոլոր երկրներում:

Զարգացող երկրներ

Հատկապես անակնկալ է առեւտրի համաձայնագրերում աշխատանքային ու բնապահպանական չափանիշները ներառելու օգտին հայտնված աջակցության բարձր մակարդակը Ասիայի եւ Լատինական Ամերիկայի սակավ զարգացած երկրներում:



Չինացիների 84%-ը կողմ եւ 8%-ը դեմ է, որպեսզի աշխատանքային նվազագույն չափանիշները ներառվեն առեւտրային համաձայնագրերում, իսկ 85% կողմ եւ 8% դեմ հարաբերակցությամբ կողմակից են, որ շրջակա միջավայրի պահպանության չափանիշներն ընդգրկվեն վերոնշյալ համաձայնագրերում:

Հնդիկները, ում կառավարությունն ամենաշատն է դեմ արտահայտվել առեւտուրը աշխատանքային ու բնապահպանական հարցերի հետ շաղկապելուն, կողմնակից են աշխատանքային չափանիշների ապահովմանը փոքր, սակայն կայուն էական տարբերությամբ. նրանք 56% կողմ եւ 25% դեմ հարաբերակցությամբ կողմնակից են առեւտրային համաձայնագրերում աշխատանքային նվազագույն չափանիշների ներառմանը, իսկ 60% կողմ եւ 28% դեմ հարաբերակցությամբ՝ շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Յուրաքանչյուր 10 թաիլանդացուց 7-ը (69%) նշում է, որ բնապահպանական չափանիշները պետք է ներառվեն առեւտրային համաձայնագրերում, այն դեպքում, երբ 10-ից 1-ը (10%) դեմ է դրան: Սակայն աշխատանքային չափանիշների մասին թաիլանդացիներին հարց չի ուղղվել:

Ֆիլիպինցիների մեծամասնությունը կողմ է աշխատանքային չափանիշներին: 55%-ն ասում է, որ առեւտրային համաձայնագրերը պետք է ներառեն աշխատանքային պայմանների պաշտպանության դրույթներ, իսկ 30%-ը դեմ է դրան: Սակայն ֆիլիպինցիները հարցման ենթարկված այն հանրույթն են, որի կարծիքը կիսվում է շրջակա միջավայրի պաշտպանության հարցում՝ 48% կողմ եւ 49% դեմ:

Լատինաամերիկյան երկու գլխավոր երկրները նույնպես կողմնակից են առեւտրային գործարքներում թե՛ աշխատանքային, թե՛ բնապահպանական նվազագույն չափանիշների ներառմանը: Արգենտինացիների ճնշող մեծամասնությունը կողմ է առեւտրային համաձայնագրերում պաշտպանական երկու չափանիշների ներառմանն էլ. 89%-ն ասում է, որ աշխատանքային պայմանների նվազագույն չափանիշները պետք է պահանջվեն, իսկ 90%-ը շրջակա միջավայրի պաշտպանության նվազագույն չափանիշների առկայությունը պարտադիր է համարում:

Արգենտինան անդամակցում է Մերկոսուրին (Հարավամերիկյան ընդհանուր շուկա), որի ղեկավարները նախկինում դեմ են արտահայտվել առեւտրային համաձայնագրերում աշխատանքային ու շրջակա միջավայրի պաշտպանության դրույթներ ներառելուն:

Հյուսիսամերիկյան ազատ առեւտրի համաձայնագրով (NAFTA) պահանջվող աշխատանքային ու բնապահպանական կանոնները կյանքի չկոչելու պատճառով Մեքսիկայի կառավարությունն արժանացել է աշխատանքի հարցերով ԱՄՆ որոշ ղեկավարների քննադատությանը: Այդուհանդերձ, այդ երկրի հանրությունը դեմ եւ կողմ արտահայտվածների զգալի տարբերությամբ կողմնակից է այդպիսի չափանիշներն առեւտրային գործարքների մաս դարձնելուն: Մեքսիկացիների երկու երրորդը (67%) նշում է, որ աշխատանքային պայմանների չափանիշները պետք է ներառվեն առեւտրային համաձայնագրերում (22%-ը դեմ է արտահայտվել), իսկ նրանց երեք քառորդը (76%) նույնը պնդում է բնապահպանական կանոնների վերաբերյալ (13%-ն է դեմ):

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՄՆ-ի հանրությունը գրեթե միաձայն կողմնակից է թե՛ աշխատաքային, թե՛ բնապահպանական չափանիշներին: Հարցված ամերիկացիների 93%-ը համաձայն է, որպեսզի «առեւտրի միջազգային համաձայնագրերի մաս կազմող երկրներից պահանջվի աշխատանքային պայմանների նվազագույն չափանիշների ապահովում»: Միայն 5%-ն է դրան դեմ: Բնապահպանական չափանիշներին ամերիկացիների հայտնած աջակցությունը հավասարապես գերակշռող է. նրանց 91%-ն ասում է, որ բնապահպանական նվազագույն չափանիշները պետք է ներառվեն առեւտրային համաձայնագրերում, եւ միայն 5%-ն է դրան դեմ:

Բուշի վարչակարգը նախկինում դեմ էր այդպիսի կանոնների ներառմանը՝ մտավախություն ունենալով, որ դրանք կբարդացնեն առեւտրային բանակցությունները եւ կարող են Միացյալ Նահանգներին պարտադրել, որպեսզի վերջինս փոփոխության ենթարկի իր իսկ ընդունած աշխատանքային որոշ օրենքներ:

Ըստ Համաշխարհային հարցերով Չիկագոյի խորհրդի ուսումնասիրությունների գծով գործադիր տնօրեն Քրիստոֆեր Ուիթնիի, «ամերիկյան հասարակությունն ակնհայտորեն մտահոգված է, որ առեւտրային համաձայնագրերը չեն պաշտպանում ոչ աշխատողներին, ոչ էլ շրջակա միջավայրը: Եվ սա զորեղ խաղաքարտ է դառնում այն կոնգրեսականների ձեռքում, ովքեր այս մտավախությունը կիսում են հատկապես հիմա, երբ նախագահի՝ Առեւտուրը քաջալերելու լիազորության հունիսին ավարտվող ժամկետից առաջ Սպիտակ տունը մեծացնում է Կոնգրեսի հետ այս հարցերը քննարկելու իր պատրաստակամությունը»:

Իսրայել եւ Արեւելյան Եվրոպա

Իսրայելցիները նույնպես չափանիշների կողմնակից են. նրանց 91%-ը կողմ է աշխատանքային, իսկ 93%-ը՝ բնապահպանական չափանիշներին:

Աշխատանքային պայմանների եւ շրջակա միջավայրի մասով չափանիշների ներառման մեծ աջակցություն բացահայտվել է նաեւ Արեւելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական տնտեսություններում: Յուրաքանչյուր 10 լեհից 9-ը կողմ է աշխատանքային (88%) եւ բնապահպանական (90%) չափանիշներին: Ուկրաինացիները նույնպես խանդավառ են այս հարցում. 85%-ը կողմ է աշխատանքային, իսկ 88%-ը՝ բնապահպանական չափանիշներին: Ցուցանիշները բարձր են նաեւ հայերի շրջանում, որտեղ աշխատանքային պայմանների ու բնապահպանական չափանիշների կողմնակիցները համապատասխանաբար կազմում են 79% եւ 82%: